Ե.

Ա՛յ իմ աննըման նըման, մայրըն չէ բերեր քեզ նըման.
Աչերդ է ի ծով նըման, եւ ունքերդ ի թեւ ծիծըռնկան.
Այդ քու աչերուդ շալֆուն մէկ ամպ էր Մօլքատ խորասան.
Ունքերդ է կապեր կամար ու կ՚երթայ ի Մըսրըն թալան,
Շատ ու շատ գերի արեր, շատ խօճայ ու շատ պազըրկան:

Զ.

Դեղներ եմ խընկիդ նըման ու առեր եմ գոյն զաֆարան:
Չգիտեմ թէ քո սէ՞րդ արեր թէ եկեր է օրըս մահուան:

Է.

Վաղվընէ քնից վեր ելայ, թէ երթամ յիմ եարն ի բարեւ,
Խօյ եարս ալ իմ դէմս ելաւ, իւր երեսն էր վարդ ու տերեւ.
Վարդ ալ խօշ լէզէթ ունի՝ վեղվէնէքն երբ դըպչի արեւ,
Հանէ զիւր կանանչ կապան, լուկ հագնի զկարմիրն ի վերեւ:

Ը.

Զայդ պագդ որի քո բերնէն դու տըւիր քո սըրտի կամով,
Հանցեղ անուշիկ պըտուղ ո՛չ ցամաք կար եւ ո՛չ ի ծով.
Նըման էր այն պըտըղոյն որ Ադամ կերաւ խաբանօք,
Կերաւ՝ ի դրախտէն ելաւ, ես ի քո ծոցոյն կարօտով:

Թ.

Զիմ եարն ի գընալ տեսայ որ կ՚երթար ի ճամբադ ի վար.
Մանտըր քայլափոխ կ՚առնէր, կու քաղէր ծաղիկ նունուֆար.
Ամէն հանգչելու տեղիկ երեսին չընէր ու կուլար.
Կուրնա՛ր չարկըմնուն աչուին, որ պահեն քեզ յիսնէ օտար:

Ժ.

Սըրտիկս է խալկին եղեր, զօրն ըզքո ղուսան կու եփէ.
Անձիկս է փայտ եղեր ու զկըրակն ի վառ կու պահէ:
Տեսեր եմ որ միսն եփի՝ նա ըզկրա՛կըն դադրեցունէ.
Թողեր միսըն զիւր ոսկորն, դեռ ի կրա՛կըն փայտ կու ձըգէ:

ԺԱ.

Դու ո՞վ ես՝ յերդիկդ ելեր զայդ օտար հողըդ կու կոխես.
Թէ վարդ ես նէ՝ վար եկո՛, թէ օտար ծաղիկ նա գընա՛: